ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.03.2020թ. թիվ 26/26-1/3755-2020 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կադաստրի կոմիտեի 10.03.2020թ. թիվ ԳԳ/1510-2020 գրության հիման վրա, 12.03.2020թ. թիվ 26/26-1/3755-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/49 ընթացակարգի շրջանակներում 16.03.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Կադաստրի կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.03.2020թ. թիվ ԳԳ/1510-2020 գրությամբ ներկայացրել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, միաժամանակ հայտնել է, որ Կադաստրի կոմիտեի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/49 ընթացակարգի շրջանակներում 16.03.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Կադաստրի կոմիտեի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 27.11.2019թ. կնքվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ստանձնել է հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (հետայսու

նաև՝ ծառայություն) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Կադաստրի կոմիտեի և «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 31.01.2020թ. կնքվել է 27.11.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03» պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

3. «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ին ուղղված 21.02.2020թ. թիվ Ն/1927-20 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, Կադաստրի կոմիտեն հայտնել է, որ Ընկերությունը պետք է մատուցեր հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայություններ, սակայն 2020 թվականի հունվարի 31-ին կնքված համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է սպասարկման գրասենյակներում քաղաքացիների դժգոհության, քանի որ Ընկերության կողմից մատուցված ծառայությունների որակը չի համապատասխանում պայմանագրում առկա տեխնիկական բնութագրով սահմանված որակի պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի ա) պարբերության պահանջը, 21.02.2020թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.03.2020թ. թիվ 26/26-1/3755-2020 գրությունը, Կադաստրի կոմիտեի 10.03.2020թ. թիվ ԳԳ/1510-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Համաձայն Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի և 3-րդ կետի՝

2.1.3 Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

<u>ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,</u>

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: **<u>Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:</u>**

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար

հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այսպիսով՝ Պայմանագրով առանձին կետով նախատեսվել է ծառայության հանձնման-ընդունման կարգը, որտեղ հստակ նկարագրվում են այն գործողությունները, որոնք իրականացվում են կատարողի կողմից ծառայության մատուցման և պատվիրատուի կողմից ծառայության ընդունման կամ մերժման փաստը հավաստելու համար, որն էլ իր հերթին ենթադրում է պայմանագրի կատարման ընթացքը:

Կադաստրի կոմիտեի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 27.11.2019թ. կնքվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ստանձնել է հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (հետայսու նաև՝ ծառայություն) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Կադաստրի կոմիտեի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 31.01.2020թ. կնքվել է 27.11.2019թ. կնքված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03» պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն պարտավորվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած մինչև 25.12.2020թ. (20 օրացույցային օրից սկսած) Պատվիրատուին մատուցել հերթի կառավարման համակարգի սպասարկման 6 300 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծառայություններ:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին ուղղված 21.02.2020թ. թիվ Ն/1927-20 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, Կադաստրի կոմիտեն հայտնել է, որ Ընկերությունը պետք է մատուցեր հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայություններ, սակայն 2020 թվականի հունվարի 31-ին կնքված համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է սպասարկման գրասենյակներում քաղաքացիների դժգոհության, քանի որ Ընկերության կողմից մատուցված ծառայությունների որակը չի համապատասխանում պայմանագրում առկա տեխնիկական բնութագրով սահմանված որակի պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի ա) պարբերության պահանջը, 21.02.2020թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջին:

Այսպիսով՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերի բազմակողմանի, օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 20.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/4400-2020 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու վերաբերյալ Պայմանագրի 2.2.1-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանն ուղարկված գրության, ինչպես նաև ծառայության հանձնման-ընդունման արձանագրության, արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Պատվիրատուի կողմից Ընկերությանը ներկայացված բացասական եզրակացության և դրա հավաստման պատճենները:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 23.03.2020թ. թիվ Գե/1841-2020 գրությամբ հայտնել է, որ պայմանագրի կատարող կողմը՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն չի ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրություններ, քանի որ պայմանագրի շրջանակներում պատշաճ ձևով չի կատարել ծառայության մատուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ անձը արձանագրում է, որ համաձայն պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցման Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի ա) պարբերության պահանջը, լուծել է Պայմանագիրը, քանի որ գտել է, որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջին: Ելնելով վերոշարադրված իրավական նորմերից և Պայմանագրով սահմանված ծառայության հանձնման և ընդունման կարգից, գտնում եմ, որ քանի դեռ Կատարողի կողմից չէր ներկայացվել ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրությունը, Պատվիրատուն չէր կարող ուսումնասիրության առարկա դարձնել ծառայության համապատասխանությունը պայմանագրի պայմաններին և արձանագրել անհամապատասխանություն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջների նկատմամբ և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի ա) պարբերությամբ սահմանված դրույթը միակողմանի լուծել պայմանագիրը:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից իր և Կադաստրի կոմիտեի միջև 27.11.2019թ. կնքված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03» ծածկագրով պայմանագրի 2.1.3 ենթակետի ա) պարբերության պահանջի, այն է՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, էական խախտման փաստը, հետևաբար նաև Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.03.2020թ. թիվ 26/26-1/3755-2020 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**